

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

01.07.2003թ.

ժ. 11.<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝** Լ. Սիրգոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Ջ. Սիրգոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

**Օրակարգի նախագծում` չորս հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի» նախագծին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/*

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 15- թիվ 60 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն 2003թ. մայիսի 2-ից մինչև մայիսի 19-ը ԱՄՆ հաշվառումների Բյուրո կատարած այցելության վերաբերյալ

*/Ներկայացնող՝ Լ. Հարությունյան/*

3.2 Հաշվետվություն 2003թ. հունիսի 10-12-ը Ժնևում Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 51-րդ լիակազմ նստաշրջանի վերաբերյալ

*/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/*

4. Այլ հարցեր

4.1 Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 24 հունվարի 2003 թվականի թիվ 01-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան/*

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի» նախագծին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/*

Նշվեց, որ սույն նախագիծը մշակվել է ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան և սահմանում է 2004-2006 թվականների պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղություններն ըստ սոցիալական, տնտեսական, բնապահպանական և ժողովրդագրական բնագավառների: Միաժամանակ նշվեց նաև, որ Ծրագրի նախագիծը, որպես ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարման ենթակա աշխատանք, «2003թ.

նոյեմբերի առաջին տասնօրյակ» կատարման ժամկետով, ներառվել է նաև ՀՀ կառավարության 21.12.2002թ. «ՀՀ կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2141-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկում (Կետ 300):

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի» նախագծին:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնին՝ կազմակերպել Ծրագրի նախագիծը սպառողներին կարծիքի ներկայացնելու, արդյունքներն ամփոփելու և Խորհրդին տեղեկատվություն ներկայացնելու աշխատանքները:

*/Արձանագրային/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

#### **2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 15- թիվ 60 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.**

*/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/*

Նշվեց, որ ներկայացվող որոշման ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված է ՀՀ ՎՊԽ 2001թ. օգոստոսի 15-ի թիվ 60 որոշմամբ հաստատված կարգի որոշ դրույթների կատարելագործման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ հարկ է ամրագրել «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-ամսական զեկույցի հրատարակման ժամկետը, ինչպես նաև կատարել փոփոխություններ համապատասխան ՀՀ կառավարության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 15-ի «Վիճակագրական տեղեկատվության հրատարակման ձևերի մասին կարգը հաստատելու մասին» թիվ 60 որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

ա/ Կետ 11-ի երկրորդ պարբերությունում «տեղեկատվական-վերլուծական» բառերը փոխել «վիճակագրական» բառով,

բ/ Կետ 20-ը՝ առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

««Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական ամսական զեկույցները վիճակագրական տեղեկատվության սպառողներին են տրամադրվում ամսական կտրվածքով՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 40-րդ օրը»:

գ/ Կետ 25-ի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական հրատարակությունների օրինակները պահպանվում են Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության արխիվային գործի գործակալության, Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հրատարակչական գործի գործակալության, Հայաստանի Հանրապետության ազգային գրապալատի, Հայաստանի Հանրապետության ազգային գրադարանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

ազգային վիճակագրական ծառայության արխիվի (ներառյալ էլեկտրոնային տվյալների բազան) միջոցով:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

**3.1 Հաշվետվություն 2003թ. մայիսի 2-ից մինչև մայիսի 19-ը ԱՄՆ հաշվառումների Բյուրո կատարած այցելության վերաբերյալ.**

*/Ներկայացնող՝ Լ. Հարությունյան/*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաշվետվության վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/Արձանագրային/*

*/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**3.2 Հաշվետվություն 2003թ. հունիսի 10-12-ը Ժնևում Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 51-րդ լիակազմ նստաշրջանի վերաբերյալ.**

*/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաշվետվության վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/Արձանագրային/*

*/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. Այլ հարցեր

**4.1 Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 24 հունվարի 2003 թվականի թիվ 01-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.**

*/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան/*

Նշվեց, որ «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003թ. հունվարի 24-ի թիվ 01-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշման նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 09.06.2003թ. թիվ 23399/2-7 և ՀՀ սոցիալական ապահովության նախարարության 23.06.2003թ. թիվ 229 գրությունների հիման վրա և հանդիսանում է փոխզիջումային տարբերակ՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և վերը նշված պետական մարմինների միջև:

Քննարկումների արդյունքում ՀՀ ՎՊԽ նախագահի կողմից առաջարկվեց փոփոխություններ չկատարել վերը նշված որոշման մեջ՝ հաշվի առնելով առաջարկի չհիմնավորված և ոչ նպատակահարմար լինելը: Նախագահի կողմից առաջարկվեց արձանագրային որոշմամբ հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին արձանագրել, որ 2003թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում համապատասխան աշխատանքները չեն կատարվելու, ինչը հարկ է փաստել տարեկան ծրագրի կատարման հաշվետվության մեջ՝ նշելով պատճառներն ու հիմնավորումները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 09.06.2003 թվականի թիվ 2399/2-7 գրությունը և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի անդամ Վ. Դանիելյանի հաղորդումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության 23.06.2003 թվականի թիվ 229 գրությունը և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի անդամ Յու. Պողոսյանի

հաղորդումը, հանձնարարել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնին «ՀՀ 2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման մասին հաշվետվության» մեջ արձանագրել համապատասխան աշխատանքների չկատարումը՝ կից հիմնավորումներով:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան